ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2020 թ. N _____-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 133-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Անհետաձգելի համարվող՝ «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նախիջևանիկ համայնքի դաշտերի ոռոգման համար բետոնե ջրանցք-դաշտ ջրատարի կառուցում», «Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կարկառ-Բերդաշեն ոռոգման համակարգի կառուցում» և «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Կարկառ գետի աջափնյա մասում (Ուղտի մեջք տեղամաս) ԷՑՎ-10-120-120 մակնիշի պոմպի էլեկտրասնուցում» շինարարական աշխատանքների գնումն՝ (այսուհետ՝ շինարարական աշխատանքներ) համապատասխանաբար 7 236 800 (յոթ միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր), 240 636 400 (երկու հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր) և 15 375 000 (տասնհինգ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով և շինարարական աշխատանքների նախագծահետազոտական ծախսերը՝ 10 391 500 (տասը միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով իրականացնել «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով.

2. Սահմանել, որ շինարարական աշխատանքների գնումն իրականացվում է տարաժամկետ վճարման կարգով՝ պայմանագրում նախատեսելով, որ գնման դիմաց վճարումներն իրականացվելու են Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
2.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Ա. ԼԱԶԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Բախշիյան*

«____» _____ 2020 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Անհետաձգելի համարվող գնում իրականացնելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության տարածման հետևանքով հնարավոր պարենային ճգնաժամից խուսափելու նպատակով պետության որդեգրած՝ պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացման քաղաքականությամբ, որի շրջանակներում ավելանում են մշակվող գյուղատնտեսական հողատարածքների մակերեսները և դրանց ավելացմանը զուգընթաց առաջանում է ոռոգման ջրով ապահովվածության հարցը, որը ներկայումս գերխնդիր է հատկապես Արցախի Հանրապետության Ասկերանի և Մարտունու շրջաններում: Նշված խնդրի արդյունավետ և օպերատիվ լուծումը հնարավոր է առկա ջրային ռեսուրսների հիմնավորված և խնայողական օգտագործմամբ ոռոգման համակարգերի կառուցման շնորհիվ:

Հաշվի առնելով, որ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները բավարար չեն վերոնշյալ ծրագրի իրականացման համար, ուստի անհրաժեշտություն է առաջացել ֆինանսավորումն իրականացնել 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝
«Անհետաձգելի համարվող գնում իրականացնելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝
1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Լ. Առուշանյան***

(ստորագրությունը)

«_____» _____ 2020 թ.

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Անհետաձգելի համարվող գնում իրականացնելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ